

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՇԵ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ սյունեցիներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մեր ամենանվիրական տոներից մեկի՝ Բանակի օրվա կապակցությամբ:

Մեր բանակը ստեղծվեց ու հզորացավ մեր պետության ստեղծմանը զուգահեռ: Իր հզորացման ճանապարհին այն բազում անգամներ ապացուցեց, որ անպարտելի է և արժանապատվորեն է կրում հերոս նախնիների ժառանգորդի սուրբ կոչումը: Այն անպարտ է, որովհետև հավատում է իր ժողովրդի ապագային և վստահ է իր ուժի մեջ:

Այս փառապանծ տոնի կապակցությամբ մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և զինված ուժերի անձնակազմին՝ մաղթելով խաղաղություն և տոկունություն՝ ի շահ հայոց բանակի և ի բարօրություն հայ զինվորի:

Կեցցե՛ հայոց բանակը:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյան